Նոտարական ակտի կոդ: 437-20180124-37-2153241
Նոտարական ակտի գաղտնագիր: Y02X73

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Երկու հազար տասնութ թվականի հունվարի քսանչորսին

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան

"ՊՐԵՄԻՈՒՄ ՊԼԱԶԱ" ՓԲԸ, ՀՎՀՀ՝ 02618525, Գրանցման համար՝ 222.120.768962, Հասցե՝ ք. Երևան, Թումանյան փող. / թիվ 8ը, որի անունից հաստատված "ՊՐԵՄԻՈՒՄ ՊԼԱԶԱ" ՓԲԸ կառավարող կազմակերպություն "ԱՐԻՆՍ ԳՐՈՒՊ" ՍՊԸ-ի նախագահ Միեր Գրիգորյանի կողմից 29.12.2017թ., լիազորագրով, գործում է ԱՇՈՏ ՌԱՈՒԼԻ ՇԱԽՆԱԶԱՐՈՎը, ծնված՝ 23/07/1970թ.-ին, ՀԾՀ՝ 3307700545, անձնագիր՝ AK0222770, տրված՝ 19/01/2009թ.-ին, 001-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ քաղաք Երևան Գ.Էմինի փողոց, տուն 20, այսուհետ՝ Վարձատու, մի կողմից և ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, ում անունից հանդես է գալիս լիազորված անձ, Ծառայության աշխատակազմի ՍՈՒՍԱՆՆԱ ՍՄԲԱՏԻ ՍԱՄՍՈՆՅԱՆի, ծնված՝ 23/03/1962թ.-ին, ՀԾՀ՝ 7303620052, անձնագիր՝ AM0802701, տրված՝ 11/07/2012թ.-ին, 011-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ քաղաք Երևան Սայաթ-Նովա փողոց, 15 շենք, բնակարան 76, այսուհետ՝ Վարձակալ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ ՀՀ քաղաք Երևան, Կենտրոն Թումանյան փողոց, թիվ 8 /ութ/ շենքից՝ 123.3 /հարյուր քսաներեք ամբողջ երեք տասներորդական/քմ. մակերեսով տարածք՝ Վարձակալի կանոնադրական խնդիրներից բխող աշխատանքային գործունեության իրականացման համար:

1.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է վարձատուին, համաձայն ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի սպասարկման համապատասխան գրասենյակի կողմից 13 հունիսի 2013թ. տրված 13062013-01-0243 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով:

1.3.Վարձատուն երաշխավորում է, որ Գույքը ԳՐԱՎ է դրված ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ-ում և հանձնված է վարձակալության տարբեր կազմակերպությունների ,համաձայն ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Երևանի տարածքային ստորաբաժանման Կենտրոն սպասարկման թիվ 3 գրասենյակի կողմից 17 հունվարի 2018թ. տրված ՄՏ-17012018-01-0319 միասնական տեղեկանքով; Գաղտնաբառ՝ R5CWPPNFP45Y:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը Վարձատուն պարտավոր է հանձնել հանձնման-ընդունման ակտով: Հանձնման-ընդունման ակտն ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:

2.2 Սույն պայմանագիրը գործում է մինչև 25.12.2018թ. (քսանհինգը դեկտեմբերի երկու հազար տասնութ թվականը):

3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի ամսական վարձավճարը կազմում է 360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ գումար, ներառյալ 20% ԱԱՀ:

3.2 Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարները, Վարձակալը Վարձատուին է վճարում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 20-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

3.3 Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի բանկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

3.4 Վարձակալը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վարձատուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.5 Եթե պայմանագրի 3.4 կետով սահմանված ժամկետում Վարձակալը չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Վարձակալը Վարձատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Վարձատուն պարտավոր է՝

4.1.1 Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին,

4.1.2 Օբյեկտը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.

4.1.3 Վարձակալած տարածքում ապահովել էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման անխափանությունը, իսկ իր մեղքով առաջացած թերությունների դեպքում, վերացնել դրանք ոչ ուշ քան 2 աշխատանքային օրվա ընթացքում:

4.1.4 Ոչ ուշ, քան երեք ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատելու անհրաժեշտության մասին.

4.2 Վարձատուն իրավունք ունի՝

4.2.1 Պահանջել Վարձակալից՝ Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

4.2.2 Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ՝ պահանջել վարձավճար կետանցի ողջ ժամանակահատվածի համար,

4.2.3 Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Վարձակալն էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը, սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված կարգով, չափով և ժամկետներում չի վճարել վարձավճարը:

4.2.4. Վարձատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձակալին:

4.3 Վարձակալը պարտավոր է՝

4.3.1 Ժամանակին վճարել Օբյեկտն օգտագործելու համար վարձավճարը, էլեկտրաէներգիայի վարձը՝ համապատասխան մատակարար կազմակերպությանը,

4.3.2 Ապահովել Վարձատուի անարգել մուտքը սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտ՝ դրա զննման և ստուգման համար,

սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին Օբյեկտի նշանակությանը համապատասխան.

4.3.4 Ապահովել Օբյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:

4.4 Վարձակալը իրավունք ունի՝

4.4.1 եթե Վարձատուն Վարձակալին հանձնել է սույն պայմանագրի 1.1 կետին չհամապատասխանող Օբյեկտ, պահանջել հանձնելու համապատասխան Օբյեկտ կամ հրաժարվել հանձնված Օբյեկտից, իսկ եթե Օբյեկտի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը,

4.4.2 Օբյեկտը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնության դեպքում.

4.4.3 Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Օբյեկտին վերաբերող փաստաթղթերը:

4.4.4. Վարձկալը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձատուին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի (զրո ամբողջ հինգ տոկոսի) չափով:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված Օբյեկտի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05%-ի (զրո ամբողջ և զրո հինգ տոկոսի) չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

5.4 Վարձակալի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Վարձակալի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի (զրո ամբողջ և զրո հինգ տոկոսի) չափով:

5.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.7 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վարձատուին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վարձատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վարձատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

5.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում՝ <<Ոչ բնակելի տարածքի վարձակալության>> պայմանագրով վարձակալության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Վարձատուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատա¬րելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Վարձակալը, ,Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասինե ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վարձատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վարձատուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.2 Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ երեսուն օրյա ժամկետում պետական գրանցման:

8.3 Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված են նոտարի կողմից և գրանցված են Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

8.4 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է համապատասխան նոտարական տարածքի նոտարական գործում, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ գրանցելու համար:

8.5 Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարեցին, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:

Պայմանագիրը կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից և բացատրվեցին օրենսդրությամբ գործող նորմերը:

8.7 ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը՝ բացառությամբ 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ցուցակի 1-ին, 2-րդ, 3-րդ, 13-րդ, 14-րդ, 19-րդ և 21-րդ կետերով նախատեսված գնումների:

8.8 Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

"Վարձատու"

"ՊՐԵՄԻՈՒՄ ՊԼԱԶԱ" ՓԲԸ

կառավարող կազմակերպություն "ԱՐԻՆՍ ԳՐՈՒՊ" ՍՊԸ-ի

լիազորված անձ ԱԾՈՏ ՌԱՈՒԼԻ ՇԱԽՆԱԶԱՐՈՎ

"Վարձակալ"

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն

ք.Երևան Նալբանդյան 13

Հ/Հ 900011556355

ՀԿՀՀ 02505511

ՀՀ Ֆինանսների նախարարության

գործառնական վարչություն

լիազորված անձ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ՍՄԲԱՏԻ ՍԱՄՍՈՆՅԱՆ

Երկու հազար տասնութ թվականի հունվարի քսանչորսին պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար՝ Նունե Սարգսյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը և գործունակությունը ստուգված են: ՀՀ Քաղ-օր-ի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30 աշխատանքային օրվա ընթացքում

Գրանցված է գրանցամատյան N 1038

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Նունե Սարգսյան



ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԳԵԿԱՎԱՐ

«Վ ա ր ձ ա ն ու»

«ՊՐԵՄԻՈՒՄ ՊԼԱԶԱ» ՓԲԸ

ՀՀ, ք.Երևան, Թումանյան փողոց, թիվ 8

h/h 2470103069490000

«Արդշինբանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ 02618525

Կառավարող Կազմակերպություն

«Արինս Գրուպ» ՍՊԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «24» Դեկտեմբերի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Կենտրոն Թումանյան փողոց 8 շենք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

24.01.2018թ 1038 Վարձակալության պայմանագիր, 12.12.2018թ 33357 համաձայնագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ ESTATE CADASTRE

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	01-006-0129-0002-001-000	Վարչական շենք	123.3 ք.մ.	ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Պայմանագիրը գործում է մինչև 25.12.2019թ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արմենուհի Հարությունյան

գրանցված ստաշտանը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

/ ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին/

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան
Երկու հազար տասնութ թվականի դեկտեմբերի տասներկուսին

«ՊՐԵՄԻՈՒՄ ՊԼԱԶԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ **«Վարձատու»**) Պետական գրանցման համարը՝ 222.120.768962, գրանցման ամսաթիվը՝ 23.05.2013թ., գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղաք Երևան, Թումանյան փողոց, թիվ 8), ի դեմս կառավարող կազմակերպություն «ԱՐԻՆՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (պետական գրանցման համարը՝ 286.110.04868, գրանցման ամսաթիվը՝ 12.02.2003թ., գտնվելու վայրը՝ «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորիչ փողոց, շ.13,13/1») , որի անունից 10.06.2018թ.տրված լիազորագրի հիման վրա հանդես է գալիս ԱՐՄԱՆ ԼԵՎՈՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԸ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր. AM0436312, տրված 26.08.2011թ. (քսանվեցը օգոստոսի երկու հազար տասնմեկ թվական), 007-ի կողմից, բնակության/հաշվառման վայրի և փոստային հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ա.Տիգրանյան փող., շ. 5, բն. 4, այսուհետ Վարձատու մի կողմից, և

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Վանիկ Բաբաջանյանի, ում անունից 27.09.2018թ. տրված լիազորագրի հիման վրա՝ հանդես է գալիս , Ծառայության աշխատակազմի Կենտրոն 2 սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ ՍՈՒՍԱՆՆԱ ՍՄԲԱՏԻ ՍԱՄՍՈՆՅԱՆԸ (անձնագիր՝ AM0802701, տրված 11.07.2012թ. 011-ի կողմից),այսուհետ Վարձակալ, մյուս կողմից,

Կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Կողմերի միջև 24.01.2018թ կնքված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի 2.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.2 Սույն պայմանագիրը գործում է մինչև 25.12.2019թ. (քսանհինգը դեկտեմբերի երկու հազար տասնինը թվականը»

2. Սույն համաձայնագիրը հանդիսանում է 24.01.2018թ կնքված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը

3. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:

4. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

ՎԱՐՁԱԿԱԼ	ՎԱՐՁԱՏՈՒ
ՀՀ ԱՍՀՆ ՍԱ ծառայություն ք.Երևան. Նալբանդյան 13 Հ/Հ 900011556355 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն ՀՎՀՀ 02505511	«Պրեմիում Պլազա» ՓԲԸ ՀՀ, ք.Երևան, Թումանյան փողոց, թիվ 8 Հ/Հ 2470103069490000 «Արդշինբանկ ՓԲԸ» ՀՎՀՀ 02618525
Լիազորված անձ	Լիազորված անձ
_____Ս. ՍԱՄՍՈՆՅԱՆ	_____Ա.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Նոտարական ակտի կոդ: 545-20181212-117-3324411
Նոտարական ակտի գաղտնագիր: JENKV1

երկու հազար տասնութ թվականի դեկտեմբերի տասներկուսին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար՝ Ատոմ Գրիգորիի Հայրապետյանիս կողմից: Համաձայնագիրը ստորագրվել է իմ ներկայությամբ քաղաքացու կողմից: Համաձայնագիրը ստորագրած անձի /անձանց/ ինքնությունը, գործունակությունը ինչպես նաև / իրավաբանական անձ/անձանց/ իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են: Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում նոտարական վավերացման պահից սկսած 30 աշխատանքային օրվա ընթացքում :

Գրանցված է գրանցամատյանում N 33357

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար վեց հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Ատոմ Գրիգորիի Հայրապետյան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

/ ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին/

քաղաք Երևան, 19.12.2019թ.

(տասնինը նոյեմբերի երկու հազար տասնինը թվական)

«ՊՐԵՄԻՈՒՄ ՊԼԱԶԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝**«Վարձատու»**) (պետական գրանցման համարը՝ 222.120.768962, գրանցման ամսաթիվը՝ 23.05.2013թ., գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղաք Երևան, Թումանյան փողոց, թիվ 8), ի դեմս կառավարող կազմակերպություն «ԱՐԻՆՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (պետական գրանցման համարը՝ 286.110.04868, գրանցման ամսաթիվը՝ 12.02.2003թ., գտնվելու վայրը՝ «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորիչ փողոց, շ.13,13/1») , որի անունից 08.01.2019թ. տրված լիազորագրի հիման վրա հանդես է գալիս ԱՐՄԱՆ ԼԵՎՈՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԸ (Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր. AM0436312, տրված 26.08.2011թ. (քսանվեցը օգոստոսի երկու հազար տասնմեկ թվական), 007-ի կողմից, բնակության/հաշվառման վայրի և փոստային հասցեն՝ «Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ա.Տիգրանյան փող., շ. 5, բն. 4»), այսուհետ Վարձատու մի կողմից, և

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Վանիկ Բաբաջանյանի, ում անունից 26.09.2019թ. տրված լիազորագրի հիման վրա հանդես է գալիս, Ծառայության Կենտրոն 2 սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ ՍՈՒՍԱՆՆԱ ՍՄԲԱՏԻ ՍԱՄՍՈՆՅԱՆԸ (անձնագիր՝ AM0802701, տրված 11.07.2012թ. 011-ի կողմից),այսուհետ Վարձակալ, մյուս կողմից,

Կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Կողմերի միչև 24.01.2018թ կնքված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի 2.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.2 Սույն պայմանագիրը գործում է մինչև 25.12.2020թ. (քսանհինգը դեկտեմբերի երկու հազար քսան թվականը)»

2. Սույն համաձայնագիրը հանդիսանում է 24.01.2018թ կնքված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը

3. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:

4. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

ՎԱՐՁԱԿԱԼ

ՀՀ ԱՍՀՆ ՍԱ ծառայություն
ք.Երևան Նալբանդյան 13
Հ/Հ 900011556355
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02505511

Լիազորված անձ

_____Ս. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՎԱՐՁԱՏՈՒ

«Պրեմիում Պլազա» ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան, Թումանյան փողոց, թիվ 8
Հ/Հ 2470103069490000
«Արդշինբանկ ՓԲԸ»

ՀՎՀՀ 02618525

Լիազորված անձ

_____Ա.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Նոտարական ակտի կոդ: 545-20191119-117-4316191
Նոտարական ակտի գաղտնագիր: 1VZ6S9

երկու հազար տասնինը թվականի նոյեմբերի տասնիննին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար՝ Ատոմ Գրիգորիի Հայրապետյանիս կողմից: Համաձայնագիրը ստորագրվել է իմ ներկայությամբ քաղաքացու կողմից: Համաձայնագիրը ստորագրած անձի /անձանց/ ինքնությունը, գործունակությունը ինչպես նաև / իրավաբանական անձ/անձանց/ իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են: Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում նոտարական վավերացման պահից սկսած 30 աշխատանքային օրվա ընթացքում :

Գրանցված է գրանցամատյանում N 25309

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար վեց հազար ՀՀ դրամ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Ատոմ Գրիգորիի Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 6 դեկտեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Կենտրոն Թումանյան փողոց 8

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

24.01.2018թ 1038 Վարձակալության պայմանագիր, 12.12.2018թ 33357 համաձայնագիր, Համաձայնագիր 19.11.2019թ. հ. 25309

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 06122019-01-0028, գաղտնաբառ՝ V2AQIBQ1PERG

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-006-0129-0002-001	Վարչական շենք	123.3 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Պայմանագիրը գործում է մինչև 25.12.2020թ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Ռաֆայել Ազատյան

Հբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 06122019-01-0028, գաղտնաբառ՝ V2AQIBQ1PERG

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
/24.01.2018թ. կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին/

քաղաք Երևան, 17.03.2021թ.(տասնյոթը մարտի երկու հազար քսանմեկ թվական)

«ՊՐԵՄԻՈՒՄ ՊԼԱԶԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ **«Վարձատու»**) (պետական գրանցման համարը՝ 222.120.768962, գրանցման ամսաթիվը՝ 23.05.2013թ., գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղաք Երևան, Թումանյան փողոց, թիվ 8), ի դեմս կառավարող կազմակերպություն «ԱՐԻՆՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (պետական գրանցման համարը՝ 286.110.04868, գրանցման ամսաթիվը՝ 12.02.2003թ., գտնվելու վայրը՝ «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորիչ փողոց, շ.13,13/1») , որի անունից 23.12.2020թ. տրված լիազորագրի հիման վրա հանդես է գալիս **Արմեն Գևորգյանը**, (ՀՀ քաղաքացու անձնագիր. ԲԱ 1682983, տրված 03.12.2014թ., 011-ի կողմից), այսուհետ Վարձատու մի կողմից, և

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Հարություն Գևորգյանի, որի անունից 16.03.2021թ. տրված լիազորագրի հիման վրա հանդես է գալիս Ծառայության Երևան քաղաքի սպասարկման վարչության աշխատակազմի «Կենտրոն-2» սպասարկման բաժնի պետի պարտականությունները կատարող Գոհար Զարգարյանին (ԱՀՓ AS 0205000, այսուհետ Վարձակալ, մյուս կողմից,
Կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի գործողության ժամկետը սահմանել մինչև 2022 (երկու հազար քսաներկու) թվականի դեկտեմբերի 25 (քսանհինգը),
2. Պայմանագրի 1.1 կետում «123.3 քմ մակերեսով» բառերը փոխարինել «237.1 քմ մակերեսով» բառերով,
3. Պայմանագրի 3.1 կետում ամսական վարձավճարը սահմանել 850.000 (ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումար, ներառյալ ԱԱՀ,
4. Պայմանագիրը լրացնել նոր կետով և սահմանել, որ պայմանագրի 1.1 և 3.1. կետերում կատարված փոփոխությունները գործելու են 2021թվականի ապրիլի 1-ից,
5. Սույն համաձայնագիրը հանդիսանում է 24.01.2018թ կնքված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը,
6. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ,
7. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

ՎԱՐՁԱԿԱԼ

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն
ք.Երևան Նալբանդյան 13
Հ/Հ 900011556355
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02505511

Լիազորված անձ

_____ԳՈՀԱՐ ՁԱՐԳԱՐՅԱՆ

ՎԱՐՁԱՏՈՒ

«Պրեմիում Պլազա» ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան, Թումանյան փողոց, թիվ 8
Հ/Հ 2470103069490000
«Արդշինբանկ ՓԲԸ»

ՀՎՀՀ 02618525

Լիազորված անձ

_____ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Նոտարական ակտի կոդ: 437-20210317-117-4991030
Նոտարական ակտի գաղտնագիր: TT4CG1

երկու հազար քսանմեկ թվականի մարտի տասնյոթին
սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության Երևան նոտարական տարածքի նոտար՝ Նունե ՌԱԶՄԻԿԻ Սարգսյանիս կողմից:
Համաձայնագիրը ստորագրվել է իմ ներկայությամբ քաղաքացիների կողմից:
Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը ինչպես նաև իրավաբանական անձանց իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է գրանցամատյանում N 4144
Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար հինգ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Նունե Ռազմիկի Սարգսյան


1 Этаж
21
15,5
5,4
2,5
3
15,0
3,6
4,2
3,5
4
18,9
5
25,4
5,4
6
23,8
5,4
7
18,6
8,6
4,3
4,4
4,7
12,6
1,7
2
84,8
21,0
13,4
11,8
13,0
4,7
6,8
10,0
6,9
10
27,7
9
40,1
8
73,7
12,0
6,0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՏԱՐ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ
ԱՐԱՄ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ
SUPREME EPEAN NOTARY PUBLIC TERRITORY
REPUBLIC OF ARMENIA
YEREVAN CITY NOTARY PUBLIC ARAM ANDRIASYAN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 8 ապրիլի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Կենտրոն Թումանյան փողոց 8

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

24.01.2018թ 1038 Վարձակալության պայմանագիր, 12.12.2018թ 33357 համաձայնագիր, Համաձայնագիր 19.11.2019թ. հ. 25309, Համաձայնագիր վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ հաստատված 17/03/2021 թ-ին Երևան նոտարական տարածքում սմ-4144

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 08042021-01-0232, գաղտնաբառ՝ H9CKUJK85NIR

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-006-0129-0002-001	Վարչական շենք	237.1 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Պայմանագիրը գործում է մինչև 25/12/2022

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՐՏԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 08042021-01-0232, գաղտնաբառ՝ H9CKUJK85NIR

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե